

Վերապատմումը տեքստի վերափոխումն է միևնույն իմաստն արտահայտող այլ բառերով ու լեզվական կառույցներով, որոնց միջոցով ուսանողն ընկալում է ոչ միայն տեքստի հիմնական գաղափարները, այլև մտքերի փոխադարձ կապն ու հեղինակի նպատակաուղղվածությունը:

Դիվանյան Ն.

## ՀԱՐԱԿԱՏԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

### ԻՆՖԻՆԻՏԻՎԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՄ

Հարակատարին փոխարինող ինֆինիտիվային կառույցը շարահյուսական առումով կարևոր խնդիր է ներկայացնում այն պատճառով, որ որոշ կառույցներում բոլորովին անսպասելի գուտ ինֆինիտիվը ի հայտ է գալիս սպասված հարակատարի փոխարեն: Այն կիրառվում է հատկապես մոդալ բայերի և brauchen բայի հետ. Er hat kommen *müssen* (ոչ թե՛ gemusst). Er wird nicht haben kommen *können* (ոչ թե՛ gekonnt). Das hättest du nicht (zu) tun *brauchen*. (ոչ թե՛ gebraucht).

Գերմաներենի առավել վաղ շրջանի քերականության մեջ, սկսած Գրիմից մինչև Բեհագել, առաջնահերթ քննարկվում է այն հարցը, թե պատմականորեն ինչպես է առաջ եկել այս «տարօրինակ» և «յուրահատուկ» կառույցը: Ելակետային է համարվում Գրիմի այն դրույթը, որ հարակատարին փոխարինող ինֆինիտիվը *ge-* նախածանցը կրճատած Partizip-ն է, ընդ որում վիճարկելի է այն, թե Partizip-ի կազմությունը առանց *ge-* նախածանցի որ չափով կարելի է ընդունելի համարել կանոնարկված խոսքում: Ուժեղ խոնարհման բայերի Partizip-ների պարագայում համապատասխան Ablaut-ի (ձայնդարձ) առկայության դեպքում հնարավոր է նմանություն ինֆինիտիվի ձևին (*gelesen – las – lesen*): Եթե ստորին գրական գերմաներենում Partizip-ը կարծես թե փոխարինվում է ինֆինիտիվով, ապա արդյունքում ստացվում է ոչ սովորական կառույց, որտեղ դերբայական ձևերը պատահականորեն նմանվել են ինֆինիտիվին: *Ich habe es bleiben lassen* նույնպես չի տարբերվում այն դեպքերից, երբ *lassen* կառույցից էլ չի հանձնարվում *lassen* ձևը: Այս մեկնաբանությունը հավանական է, քանի որ հաճախակի գործածվող մի քանի այլ ուժեղ բայեր, ինչպիսիք են *heißen, lassen* և *sehen*, միանալով *haben* օժանդակ բային, *ge-* նախածանցը դուրս են գետել և Partizip-ը նմանվել է ինֆինիտիվին. *Ich habe es bleiben lassen* փոխանակ՝ *gelassen*.